3
ՕԳՈՍՏՈՍԻ
2022

Luys Լույս®

ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ. ՕՐԵՆՍԴՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ. ՕՐԵՆՍԴՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԴԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԸ 4

2. ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ 11

3. ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 17

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնց արդյունքում սահմանափակվել է մարդկանց խոսքի ազատության իրավունքը:

Նախ, Ազգային ժողովի նախագահի հեղինակած նախագծի արդյունքում էականորեն բարձրացվեցին զրպարտության և վիրավորանքի համար նախատեսված դրամային փոխհատուցումների չափերը[1]. զրպարտության դեպքում փոխհատուցման վերին շեմ սահմանվեց 6 միլիոն ՀՀ դրամը (2 միլիոնի փոխարեն), իսկ վիրավորանքի դեպքում՝ 3 միլիոն ՀՀ դրամը (1 միլիոնի փոխարեն): Այնուհետև, 2021 թվականի հուլիսի 30-ին Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով քրեական պատասխանատվություն սահմանվեց ծանր վիրավորանքի համար[2]:

Ընդ որում, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին և երկրորդ ընթերցմամբ ընդունվեց Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում՝ հրատապության կարգով, առանց մասնագիտական քննարկումների:

Ծանր վիրավորանքի հանցակազմը իրականում «սերվում է» դեռևս 2020 թվականին ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակված նախագծից, համաձայն որի՝ պետք է քրեականացվեր հանրային ծառայության մեջ գտնվող անձանց ուղղված վիրավորանքը:[3] Նախագիծը, սակայն, շրջանառությունից հանվեց՝ խիստ քննադատության ենթարկվելուց հետո:

ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ այն փաստացի վերածվեց հենց այն օրենքին, որն առաջարկում էր ՀՀ գլխավոր դատախազությունը, քանի որ ապահովված չէր դրա կիրառման ոչ խտրական բնույթը:

Պետք է արձանագրել, որ օրենսդիրը ծանր վիրավորանքի քրեականացումը հիմնավորում է նրանով, որ Հայաստանում բացակայում է բռնությամբ կատարված

---

[1] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1087.1:

[2] «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-323-Ն օրենքն ընդունվել է 2021 թվականի հուլիսի 30-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2021 թվականի օգոստոսի 20-ին և ուժի մեջ մտել 2021 թվականի օգոստոսի 30-ին:

[3] «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, հասանելի է https://www.e-draft.am/projects/3045 հղումով:

բազմաթիվ հանցագործությունների շարժառիթը, կոնֆլիկտներն ու անհամաձայնությունները քաղաքակիրթ եղանակով լուծելու մշակույթը:[4]

Օրենքի ընդունումից ամիսներ անց, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմեց Սահմանադրական դատարան՝ ծանր վիրավորանքի քրեականացումը վիճարկելու հարցով, սակայն վերջինս խնդրո առարկա հոդվածը ճանաչեց Սահմանադրությանը համապատասխանող[5]:

Հարկ է նկատել, որ վիրավորանքն ու զրպարտությունը Հայաստանի Հանրապետությունում ապաքրեականացվել էին դեռևս 2010 թվականին:[6]

Ստացվում է, որ Սահմանադրական դատարանը խնդրո առարկա որոշմամբ դեմ գնաց ինչպես դեռևս 11 տարի առաջ արտահայտված Սահմանադրական դատարանի դիրքորոշմանը[7], այնպես էլ արդի միջազգային իրավական մոտեցումներին[8]:

Ուշագրավ է, որ Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումից շուրջ մեկ ամիս հետո արդարադատության նախարարը հայտարարեց, որ. «Կառավարությունը գտել է, որ հետագա ժողովրդավարացման մեր օրակարգում խոսքի ազատության նույնիսկ իրավաչափ սահմանափակումը պետք է հնարավորինս իրականացնել առանց քրեական հետապնդման գործիքակազմի: Արդյունքում, վարչապետի գլխավորությամբ կայացած միջգերատեսչական քննարկումների արդյունքներով նպատակահարմար չի համարվել ծանր վիրավորանքի ամրագրումը նոր Քրեական օրենսգրքում»:[9]

Այսպիսով, ստացվեց այնպես, որ Սահմանադրական դատարանը՝ կոչված լինելով ապահովելու Սահմանադրության գերակայությունը, տուրք տվեց օրենսդիր և գործադիր իշխանությունների քաղաքական շարժառիթներին՝ ձևավորելով

---

[4] Նախագծերի ընդունման հիմնավորումները հասանելի են հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/draft_docs7/P-1012_Himnavorum.pdf:

[5] ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշումը, հասանելի է https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162565 հղումով:

[6] 2010 թվականի մայիսի 18-ի ՀՕ-98-Ն օրենքով ուժը կորցրած ճանաչվեցին ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները, իսկ նույն օրն ընդունված ՀՕ-97-Ն օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը լրացվեց 1087.1-ին հոդվածով՝ պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:

[7] ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը:

[8] Առավել մանրամասն ներկայացված է սույն վերլուծության «Հանցակազմի համապատասխանությունը միջազգային իրավական չափանիշներին և Հայաստանի ստանձնած պարտավորություններին» բաժնում:

[9] Հասանելի է https://hetq.am/hy/article/145461 հղումով:

խոսքի ազատության և կարծիքի արտահայտման ազատության իրավունքներին սահմանափակման թույլատրելիության վտանգավոր նախադեպ:

Սույն վերլուծությամբ «Լույս» հիմնադրամը փորձ է կատարել վեր հանել Սահմանադրական դատարանի որոշման մեջ տեղ գտած խնդրահարույց եզրահանգումները, որոնց վերլուծությամբ փաստվում է, որ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը, թե՛ Սահմանադրական դատարանի կողմից ծանր վիրավորանքի քրեականացումն արդարացնող իրավական դիրքորոշումներն առաջ են բերում Սահմանադրության 42-րդ հոդվածով երաշխավորված կարծիքի արտահայտման ազատության իրավունքի խախտման խորքային վտանգներ:

Սույն վերլուծությունն անդրադառնում է ծանր վիրավորանքի հանցակազմի անորոշությանը (մաս 1), ծանր վիրավորանքի քրեականացման համաչափությանը (մաս 2), ինչպես նաև հանցակազմի համապատասխանությանը միջազգային իրավական չափանիշներին և Հայաստանի ստանձնած պարտավորություններին:

1. ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ քրեական օրենսգիրք

Հոդված 137.1. Ծանր վիրավորանքը

1. Անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:
2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կամ անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը, որը՝
1) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով,
2) կատարվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված՝
պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:
3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է միևնույն անձի նկատմամբ պարբերաբար՝ պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

Սույն հոդվածում հանրային գործունեություն է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը:

ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի ձևակերպումները խնդրահարույց են իրավական որոշակիության տեսանկյունից, քանի որ առկա կարգավորումները թույլ չեն տալիս հասկանալու կամ կանխատեսելու իրավական նորմի պահանջը և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Մինչդեռ, Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքի ուղղակի պահանջն է, որ «հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների

և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Առավել խնդրահարույց է այն, որ վիճահարույց ձևակերպումների անորոշության փաստը պատշաճ գնահատականի չի արժանացել Սահմանադրական դատարանի կողմից: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը՝ արձանագրելով, որ. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը **թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը**»:[10]

Ընդ որում, իրավական որոշակիության պահանջն առավել խիստ պետք է լինի քրեաիրավական նորմերի պարագայում, քանի որ այս դեպքում գործ ունենք մարդու հիմնական իրավունքներին առավել ինտենսիվ միջամտության հետ: Սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում շեշտադրել է այն հանգամանքը, որ հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները**, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում:[11]

Հետևաբար, խոսքի ազատության իրավունքը սահմանափակող քրեաիրավական նորմերը պետք է ձևակերպված լինեն այնպիսի հստակությամբ, որ հիմնական իրավունքի կրողն ի վիճակի լինի հասկանալու, թե իր կողմից դրսևորվող ո՞ր վարքագիծը կարող է հանգեցնել քրեորեն պատժելի արարքի և դրանով նախատեսված պատասխանատվության:

---

[10] ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի մայիսի 13-ի ՍԴՈ-753 որոշումը, կետ 9:

[11] ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշումը, կետ 4.3:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նույնպես անդրադարձել է քրեական նորմերի իրավական որոշակիության հարցերին և ընդգծել, որ «պահանջվող կանխատեսելիության աստիճանը կախված է օրենքի բնույթից (հատկապես կարևոր է քրեական օրենսդրության դեպքում), որին հաջորդում է այն հարցը, թե արդյոք օրենքները կայուն և հետևողական են[12]»:

Այսպես, խնդրո առարկա հանցակազմի առումով խիստ անորոշ ենք համարում 137.1--ին հոդվածի 1-ին մասում նախատեսված *«ծանր վիրավորանք հասցնելը», «հայհոյելը», «արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը»* ձևակերպումները, որոնց հետագա գնահատումը իրավունքի հասցեատիրոջ համար առաջացնելու է քրեաիրավական հետևանքներ:

Խնդրո առարկա սահմանադրաիրավական վեճի շրջանակներում անդրադառնալով վիճարկվող դրույթների իրավական որոշակիությանը՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «ծանր վիրավորանքի հանցակազմի օրենսդրական ձևակերպումները չունեն այն աստիճանի վերացականություն, որը համապատասխան սուբյեկտներին զրկում է վիճարկվող իրավադրույթների իմաստը հասկանալու, այն հետևանքները կանխատեսելու հնարավորությունից, որոնք կարող են առաջացնել իրենց գործողությունները, ի վիճակի լինել դրսևորելու համապատասխան վարքագիծ կամ համատեղելու իրենց վարքագիծը օրենքով սահմանված պահանջներին, այն է՝ ծանր վիրավորանքի արգելքին»:[13]

Արդյունքում, դատարանը եզրահանգել է, որ «իրավական որոշակիությունը չպետք է բացարձակացնել: Գնահատողական եզրույթների առկայության պատճառով իրավակարգավորումն ինքնին խնդրահարույց չէ, որպիսի պայմաններում որոշակիության ծավալը լրացնելու ու իրավադրույթների կիրառման համար անհրաժեշտ ու բավարար բովանդակություն հաղորդելու առաքելությունը վերապահված է իրավակիրառողին»:[14]

Օրենսդրական կարգավորումներով ոչ միայն բացահայտված չեն տվյալ «ծանր վիրավորանք» հասկացության բովանդակությունը, այլև պարզ չէ, թե ինչ

---

[12] Վենետիկի հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 18-ի կարծիքը ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի վերաբերյալ, հասանելի է https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2020)005-e հղումով, կետ 34:

[13] ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշումը, կետ 5.6:

[14] Նույն տեղում:

չափանիշների հիման վրա է գնահատվելու անձի արժանապատվության *ծայրահեղ անպարկեշտ* եղանակով վիրավորելու փաստը: Նորմը իրավակիրառողին լայն գնահատողական հայեցողություն է տալիս, ինչը կարող է հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության իրավունքի անհիմն սահմանափակման և խտրական վերաբերմունքի:

Արդյունքում, օրինակ, ականատես ենք լինում քրեական գործի հարուցման՝ ծանր վիրավորանքի հանցակազմի հատկանիշներով, այն փաստի առթիվ, որ անձը տեղադրել է Ն. Փաշինյանի նկարը և հրապարակել հետևյալ բանաստեղծությունը. «Նիկոլի կոշիկները լիզող ստրուկներ, սրան ասեք թող կողմնորոշվի՝ ի վերջո քանի հազար զինվորի կյանք է փրկել: Եթե 35.000 զինվորի կյանք է փրկել, ուրեմն արժանի է Ազգային հերոսի կոչման, պահանջեք թող ձեր զիբիլի վեդրոյի միջի կատվին տան Ազգային հերոս: Մեկ ա՝ ինքը Քաջ Նազարն ա»:

Մեկ այլ քրեական գործի հարուցման շրջանակում Ն. Փաշինյանի լուսանկարով հրապարակված «Փաշինյա՛ն, թույլ չենք տա Ղազախստանում իշխանության գան փողոցի թափթփուկները» վերտառությամբ հոդվածի ներքո քաղաքացին կատարել է հետևյալ գրառումը. «Փողոցով եկած թափթփուկը մյուս թափթփուկներին անուն ա դնում»:

Ն. Փաշինյանին «ՀՀ ԳԳ համբալապետ» որակելու համար քաղաքացու նկատմամբ ևս հարուցվել է քրեական գործ:

Քաղաքացին հրավիրվել է ՀՀ ոստիկանություն այն փաստի առթիվ, որ հրապարակել է հետևյալ գրառումը. «Լսիր, ա՛յ սրիկա: Ես եմ քեզ ասում, որ դու հանձնել ես հողերը: Դու դավաճան ես, դու հողատու ես: Դե արի, հլը փորձիր հետս մատ թափ տալով խոսես»:

Հոդվածի կարգավորումների շրջանակում անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը, որը **կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով,** դիտարկվում է առավել վտանգավոր հանցանք և ըստ այդմ՝ առավել բարձր պատասխանատվություն է առաջացնում (500-պատիկից 1000-պատիկի չափով տուգանք):

Խնդրահարույց է վիճարկվող հանցակազմի առավել վտանգավոր դրսևորում համարվող արարքի կատարումը «հրապարակային այլ եղանակով» եզրույթի գործածումը, քանի որ վիրավորանքի օբյեկտիվ կողմը ցանկացած պարագայում ընդգրկում է «հրապարակային» հատկանիշը, այսինքն՝ 2 և ավելի մարդկանց մասնակցություն:

Նշված ձևակերպումները ևս կասկածի տակ են դնում ողջ կարգավորման որոշակիությունը և գործնականում առաջացնում են խնդիրներ՝ չնայած նրան, որ ըստ Սահմանադրական դատարանի՝ դրանք չեն խաթարում իրավական որոշակիության սկզբունքը: Վերջինիս գնահատմամբ՝ վիճարկվող դրույթում առկա ընդհանրական ձևակերպումների բովանդակությունը պետք է բացահայտվի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում՝ նկատի ունենալով յուրաքանչյուր կոնկրետ դեպքը և դրա առանձնահատկությունները, ծանր վիրավորանքի համատեքստը և այլն:

Նման հայեցողական և անորոշ ձևակերպումները հանգեցնելու են նրան, որ իրավունքի հասցեատերերը՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, խուսափելու են իրենց կարծիքի ազատ արտահայտման սահմանադրական իրավունքի իրացումից՝ վախենալով իրավակիրառի կողմից նորմի հետագա մեկնաբանման արդյունքում իրենց համար վրա հասանելիք հետևանքներից:

Վիճահարույց են նաև քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված «հրապարակախոսական գործունեություն», «քաղաքական գործունեություն» և «հասարակական գործունեություն» եզրույթները, որոնք հանդես են գալիս որպես արարքի առավել ծանր տեսակի կատարման տարրեր:

Նշված եզրույթների որոշակիությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն իր որոշմամբ անդրադարձ է կատարել միայն դրանց մի մասին, այն է՝ *«լրագրողական գործունեություն»* և *«հանրային ծառայության կամ հանրային պաշտոն»* եզրույթներին: Մինչդեռ, խնդրահարույց են *«հրապարակախոսական գործունեություն», «քաղաքական գործունեություն» և «հասարակական գործունեություն»* հասկացությունները:

Խնդիրն այն է, որ քրեաիրավական նորմն այս հասկացությունների հետ կապում է լուրջ իրավական հետևանքներ և առանձնացնում է անձանց լայն շրջանակ, ովքեր դառնում են հատուկ պաշտպանության սուբյեկտ և, ըստ այդմ, օգտվում են սահմանված բարձր երաշխիքներից:

Հարց է առաջանում, թե, օրինակ՝ գործնականում իրավակիրառն ի՞նչ չափանիշների հաշվառմամբ է գնահատելու և տարբերակելու *«հրապարակախոսական գործունեություն», «քաղաքական գործունեություն» և «հասարակական գործունեություն»* հասկացությունները: Արդյո՞ք, օրինակ, սոցիալական ցանցերում տեսագրություններ, տեսաուղերձներ կամ ցանկացած հրապարակում կատարելը դիտարկվելու է հրապարակախոսական գործունեություն, թե՞ ոչ:

Նույն կերպ հստակ չէ, թե ի՞նչ է ենթադրում «հասարակական» կամ «քաղաքական» գործունեության հետ կապված վարքագիծը: Այսպես, օրինակ՝ ի՞նչ չափանիշներով է որոշվելու, թե համացանցում գրառումներ կատարող անձը զբաղվում է քաղաքական կամ հասարակական գործունեությամբ, թե՞ ոչ:

Վերը նշված անորոշության հետ կապված, Սահմանադրական դատարանը բավարարվել է արձանագրելով, որ «հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող ցանկացած անձի նկատմամբ առավել բարձր քրեաիրավական պաշտպանություն նախատեսելով՝ օրենսդիրը նպատակ է հետապնդել պաշտպանելու ոչ միայն վերջինիս պատիվն ու արժանապատվությունը, այլև պետական անվտանգությունը (հանրային իշխանության արդյունավետ գործունեությունը): Նման մոտեցման հիմքում ընկած է այն իրավաչափ տրամաբանությունը, որ երկրորդ դեպքում թիրախավորվում է ոչ միայն կամ ոչ այնքան տվյալ անձը, որքան այն, որ նա իրականացնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն: Այս հանգամանքն ինքնին պարտավորեցնում է **պետությանը լրացուցիչ իրավական երաշխիքներ նախատեսել հանրային պաշտոն և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց համար**, առավել ևս այն պարագայում, որ վերջիններս, իրենց կարգավիճակով պայմանավորված, կրում են որոշակի սահմանափակումներ, այդ թվում՝ կարծիքն արտահայտելու ազատության և ծանր վիրավորանքին համարժեք արձագանքելու տեսանկյունից»:[15]

Մինչդեռ, ուշագրավ է, որ Սահմանադրական դատարանը 2011 թվականի նոյեմբերի 15-ի իր որոշման մեջ ամրագրել էր ճիշտ հակառակը, այն է, որ «**հասարակական և քաղաքական (հանրային) գործիչների դեմ ուղղված քննադատության սահմաններն առավել լայն են, քան մասնավոր անձանց դեպքում**: Ի տարբերություն վերջիններիի՝ հասարակական և քաղաքական գործիչների գործունեությունն ավելի հրապարակային է, ուստի ավելի մեծ հանդուրժողականություն է պահանջում: Դա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածների սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունից, քանի որ ժողովրդաիշխանությունն իրականացվում է նաև հանրային ծառայության միջոցով, և այդ ծառայությունը կրող անձանց հանրային և մասնավոր վարքագիծն օբյեկտիվորեն կարող է հասարակական քննարկման առարկա դառնալ»:[16]

---

[15] ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշումը, կետ 5.4:
[16] Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը, կետ 5:

Այսպիսով, ծանր վիրավորանքի քրեականացման հոդվածով նախատեսված ձևակերպումները ոչ միայն չեն ստացել որոշակի, հստակ և կանխատեսելի ամրագրումներ օրենսդրական մակարդակում, այլև պատշաճ գնահատականի չեն արժանացել Սահմանադրական դատարանի կողմից:

2. ԾԱՆՐ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆԸ

Քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածով նախատեսված հանցակազմը շոշափում է Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված կարծիքի ազատ արտահայտման հիմնական իրավունքի պաշտպանության առարկան, ուստի, նշված իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի պահանջներին: Նշված հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է *պիտանի և անհրաժեշտ* լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է *համարժեք* լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Համաչափության սկզբունքի *առաջին կարգը* հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա:[17]

Այսպես, կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հիմքերը սահմանված են հենց Սահմանադրությամբ, մասնավորապես՝ 42-րդ հոդվածի 3-րդ մասով, որը մատնանշում է պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակները:

Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունն առաջին հերթին կանխորոշվում է դրանցով հետապնդվող նպատակով:

Հետապնդվող նպատակին հասնելու համար միջոցը *պիտանի է* այն դեպքում, եթե այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելուն: Հիմնական իրավունքին միջամտել *անհրաժեշտ է* միայն այն դեպքում, երբ

[17] ՀՀ Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշումը, կետ 4.4:

հետապնդվող նպատակին անհնարին է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի խնդրո առարկա հիմնական իրավունքով պաշտպանված իրավական բարիքը: Բացի այդ, միջամտությունը պետք է համարժեք կամ չափավոր լինի, այսինքն՝ միջամտության սաստկությունը չպետք է անհամարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի նշանակությանը և կշռին[18]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք վճիռներում[19] արտահայտել է դիրքորոշում, ըստ որի՝ խոսքի ազատությունը քաղաքացիական հասարակության հիմնարար իրավունքներից է, և դրա սահմանափակումը պետք է բխի հանրային խիստ կարիքից: Բացի այդ, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հասարակության **կողմից «քննադատական վերաբերմունք» հասկացությանն առավել լայն մեկնաբանություն պետք է տրվի, եթե այն վերաբերում է քաղաքական ասպարեզում հանդես եկող պաշտոնատար անձանց ու հանրային, այդ թվում՝ քաղաքական գործիչներին:**

Սուբյեկտային կազմի էական ընդլայնման հետ կապված նախագծին կից ներկայացված հիմնավորումներում նշվում է, որ շեշտակիորեն նվազել է հանրային իշխանության և ընդհանրապես հանրային գործունեություն ծավալող անձանց նկատմամբ հարգանքը:[20]

Բացի այդ, ըստ նախագծի հեղինակների՝ կարգավորումը ոչ այնքան պատասխանատվության ենթարկելու համար է, որքան կանխարգելիչ նշանակություն ունենալու:[21]

Այսպես, ընդգծելով կարծիքի արտահայտման ազատության կարևոր նշանակությունը ժողովրդավարական հասարակության մեջ՝ հարկ է նշել, որ այն ապահովում է ժողովրդի կամքի ազատ ձևավորումն ու բաց հաղորդակցությունը

---

[18] Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան, Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, 2016, http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf հղումով, էջ 82:

[19] Բոդրոժիչն ընդդեմ Սերբիայի (Bodrožic v. Serbia) թիվ 32550/05 գործով 2009 թվականի հունիսի 23-ի, Ջանովսկին ընդդեմ Լեհաստանի (Janowski v. Poland) թիվ 25716/94 գործով 1999 թվականի հունվարի 21-ի, Բոդրոժիչն ու Վույինն ընդդեմ Սերբիայի (Bodrožić and Vujin v. Serbia) թիվ 38435/05 գործով 2009 թվականի հունիսի 23-ի, Օտեգի Մոնդրագոնն ընդդեմ Իսպանիայի (Otegi Mondragon v. Spain) թիվ 2034/07 գործով 2011 թվականի մարտի 15-ի, Նիլսենն ու Ջոնսենը ընդդեմ Նորվեգիայի (Nilsen and Johnsen v. Norway) թիվ 23118/93 գործով 1999 թվականի նոյեմբերի 25-ի, Թամերն ընդդեմ Էստոնիայի (Tammer v. Estonia) թիվ 41205/98 գործով 2001 թվականի փետրվարի 6-ի որոշումները:

[20] Նախագծերի ընդունման հիմնավորումները հասանելի են հետևյալ հղումով՝ http://www.parliament.am/draft_docs7/P-1012_Himnavorum.pdf:

[21] Հասանելի է https://hetq.am/hy/article/133946 հղումով:

հասարակության և պետության միջև: Ազատ հանրային կարծիքը գաղափարների փոխանակման և բազմակարծության երաշխիքն է, որի միջոցով էլ իրականացվում է ժողովրդավարությունը:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով համաչափության սկզբունքի տարրերին, որևէ կերպ չի հիմնավորել իր որոշումը, այլ անմիջապես եկել է այն եզրահանգման, որ «օրենսդիրը իրավաչափ և սահմանադրորեն անհրաժեշտ նպատակ է ունեցել պաշտպանելու այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են անձի պատիվն ու բարի համբավը, պետական անվտանգությունը, հասարակական կարգը, առողջությունը և բարոյականությունը, որոնցից յուրաքանչյուրը կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման հիմք է, և դրանցից միայն մեկի առկայությունն ինքնին բավարար է այդ ազատության սահմանափակման նպատակի իրավաչափության տեսանկյունից: Այս առումով վիճարկվող դրույթն առանձնահատուկ է, քանի որ տվյալ դեպքում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումը հետապնդում է սահմանադրորեն պաշտպանվող ոչ թե մեկ, այլ մի քանի շահերի պաշտպանության նպատակ»:[22]

Ինչ վերաբերում է ընտրված միջոցի պիտանիությանը, ապա Սահմանադրական դատարանը գտել է, որ «ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելն ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում և այն դիտարկել է որպես նպատակին հասնելու համար պիտանի միջոց՝ մատնանշելով, որ «քրեական քաղաքականության մեջ իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության արդյունավետ իրացման դեպքում հնարավոր կլինի հասնել օրենսդրի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակին»:[23]

Բացի այդ, ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն սահմանելու՝ համաչափության սկզբունքի անհրաժեշտության տարրի վերաբերյալ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «առկա չէ սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու համար բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց»:[24]

Մինչդեռ, նշվածի արձանագրմամբ ստացվում է, որ Հայաստանում առկա է վիրավորանքի ապաքրեականացման և քրեականացման հարցի վերաբերյալ պետության քաղաքականության մոտեցումների հակասություն՝ հիմք ընդունելով նախ՝ 2010 թվականին վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացումը և

[22] ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշումը, կետ 5.3.2:
[23] ՀՀ Սահմանադրական դատարանի 2022 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1646 որոշումը, կետ 5.3.3:
[24] Նույն տեղում:

երկրորդ՝ Սահմանադրական դատարանի նախկինում կայացրած որոշումը, որի հիմքում ընկած է այն դիրքորոշումը, որ վիրավորանքը և զրպարտությունը չպետք է քրեականացվեն:

Չնայած նրան, որ օրենսդիրը Սահմանադրական դատարանին հնարավորություն է տալիս բացառիկ դեպքերում վերանայել իր ընդունած որոշումները[25], պետք է արձանագրել, սակայն, որ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1646 և ՍԴՈ-997 որոշումներում առկա են իրավական դիրքորոշումների միջև տարբերություններ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանը, ՍԴՈ-997 որոշմամբ անդրադառնալով վիրավորանքի և զրպարտության միջոցով պատճառված վնասի հատուցման համաչափության խնդրին, արձանագրել է, որ «գործնական խնդիրն առավելապես ոչ թե օրենքով իրավաչափ սահմանափակումների կամ պատասխանատվության միջոցների նախատեսման մեջ է, այլ վերաբերում է դրանց համաչափության ապահովմանն ու դատական պրակտիկայում դրա երաշխավորմանը՝ որպես պետության անմիջական պարտականություն: Վերջինս պետք է հենվի այն ելակետային սկզբունքի վրա, որ հանրային շահի գերակայության տեսանկյունից լրատվամիջոցի կանխարգելիչ ու հակակշռող նշանակությունն ավելին է, քան նյութական միջոցներով սխալն ուղղելու անհրաժեշտությունը: Այս հանգամանքը կոնկրետ իր արտացոլումն է գտել վեճի առարկա հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության և 5-րդ մասի 2-րդ կետի իրավակարգավորման շրջանակներում և պետք է համարժեք ձևով հաշվի առնվի դատական պրակտիկայում:

Սահմանադրահիրավական այս հիմնարար դրույթները քննության առարկա իրավահարաբերությունների շրջանակներում ունեն ելակետային ու բացարձակ նշանակություն ոչ միայն օրինաստեղծի, այլև իրավակիրառողի ու այդ հարաբերությունների մասնակիցների համար: Այդ դրույթների համադրված վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի իրավակարգավորման շրջանակներում դրանք հիմնականում

[25] «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված որոշումները սույն օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա կարող է վերանայել, եթե ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված՝ Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրահիրավական նշանակություն:

արտացոլված են համակարգային օրգանական կապի մեջ և ապահովում են իրավաչափ հավասարակշռություն իրավունքի ու դրա պաշտպանության երաշխիքների, հանրային ու անհատական շահերի, իրավական ու բարոյական չափորոշիչների միջև»:[26]

Բացի այդ, դատարանը նշել է, որ «արատավորող արտահայտության համար նյութական փոխհատուցումը պետք է սահմանափակվի զրպարտության ենթարկված անձին պատճառված գույքային վնասից: Ցանկացած այլ նպատակով վնասի փոխհատուցումն օգտագործելն անթույլատրելիորեն սահմանափակող ազդեցություն կունենա ազատորեն արտահայտվելու իրավունքի վրա, ինչը չի կարող գնահատվել որպես հիմնավորված անհրաժեշտություն ժողովրդավարական հասարակությունում»:[27]

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ գտնում ենք, որ Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար մինչ այժմ պետության կողմից վիրավորանքի կամ հայհոյանքի դեմ պայքարի ոլորտում իրականացված միջոցառումներին նախքան եզրահանգելը, որ խնդրո առարկա վեճի շրջանակում «առկա չէ սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու համար բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց»:

Մասնավորապես, արդյո՞ք պետության կողմից ծանր վիրավորանքի կամ ատելության խոսքի բացառման, բազմակարծությունը խրախուսելու, հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր օրենսդրական մակարդակում, կամ իրականացվել են իրազեկման աշխատանքներ հանրության շրջանում: Նույն հարցադրումը վերաբերում է նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ իրականացրած աշխատանքներին: Քննարկման առարկա պետք է դառնային նաև այնպիսի հարցեր, որոնք թույլ կտային գնահատել իրականացված միջոցառումների արդյունավետությունը՝ թե՛ որակական թե՛ քանակական տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարանը նաև չի անդրադառնում 2021 թվականի մարտի 24-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-330-Ն օրենքին, որով երեք անգամ ավելացվել են քաղաքացիաիրավական պատասխանատվության առավելագույն չափերը վիրավորանքի և զրպարտության

[26] Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը, կետ 6:
[27] Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-997 որոշումը, կետ 9:

համար: Դա թերևս թույլ կտար գնահատել, թե որքանով է քաղաքացիաիրավական պատասխանատվության չափերի կտրուկ ավելացումը տեղավորվում պետության կողմից վիրավորանքի դեմ պայքարի միջոցառումների համատեքստում և «բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց»:

3. ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Սահմանադրության 81-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է ցանկացած հիմնական իրավունքի սահմանափակման մեկ այլ կարևոր չափանիշ, համաձայն որի՝ սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Այս առումով, պետք է արձանագրել, որ խնդրո առարկա կարգավորումները վիճելի են նաև միջազգային իրավական չափորոշիչների և Հայաստանի ստանձնած պարտավորությունների տեսանկյունից:

Այսպես, ծանր վիրավորանքի քրեականացումն ի սկզբանե քննադատության է ենթարկվել մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մանդատ ունեցող կառույցների կողմից: Մինչդեռ, Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1646 որոշման մեջ բացակայում է անդրադարձը ոչ միայն նշված գնահատականներին և մտահոգություններին, այլև ժամանակակից միտումներին և չափորոշիչներին:

Սահմանադրական դատարանը, վկայակոչելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2022 թվականի հունվարի 27-ին ընդունված թիվ 2427 (2022) «Ժողովրդավարական ինստիտուտների գործունեությունը Հայաստանում» վերտառությամբ բանաձևով նախատեսված որոշ կետեր, չի անդրադարձել Խորհրդարանական վեհաժողովի այն կարևոր դիրքորոշմանը, որ «ծանր վիրավորանքը» չպետք է քրեականացվի:[28] Ստացվում է, որ Սահմանադրական դատարանը չի իրականացրել օբյեկտիվ հետազոտություն, ինչի արդյունքում նշված հանձնարարականը չի արտացոլվել ՍԴՈ-1646 որոշման մեջ:

Նշենք նաև, որ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի կարգավորումն առաջացրել է մարդու իրավունքների պաշտպանության այլ միջազգային կառույցների մտահոգությունը: Այսպես, «Freedom House» իրավապաշտպան կազմակերպությունը մտահոգություն է հայտնել՝ նշելով, որ այս օրենսդրության կիրարկումը, որի արդյունքում միայն 2022 թվականին հարուցվել է ավելի քան 260 քրեական գործ, խոսում է Հայաստանում ժողովրդավարական նորմերի ակնհայտ

[28] Հասանելի է https://assembly.coe.int/LifeRay/MON/Pdf/TextesProvisoires/2021/20211217-ArmeniaInstitutions-EN.pdf հղումով, կետ 23, 24:

դեգրադացիայի մասին և ազատ արտահայտման համար սառեցնող ազդեցության ունի: Կազմակերպությունը կոչ է արել խորհրդարանին չեղարկել այս օրենքը, որն այնքան կոպտորեն խախտում է Հայաստանի Սահմանադրությամբ հաստատված սկզբունքները, երկրի հանձնառությունները՝ ԵԱՀԿ-ի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակում, որի մասն է Հայաստանը:[29]

Հատկանշական է, որ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության նախարարների խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 3/18 որոշման 11-րդ կետը պետություններին կոչ է անում ապահովելու, որ **զրպարտության մասին օրենսդրությունը չնախատեսի չափից ավելի խիստ պատասխանատվության միջոցներ, որոնք կարող են խաթարել լրագրողների անվտանգությունը կամ գրաքննության ենթարկել լրագրողներին, ինչպես նաև խոչընդոտել հասարակության իրազեկման վերջիններիս առաքելությունը**: Անհրաժեշտության դեպքում պետք է վերանայել և չեղյալ հայտարարել նման օրենքները՝ մասնակից պետությունների մարդու իրավունքների միջազգային իրավունքի պարտավորություններին համապատասխան:[30]

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովը 2007 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունեց թիվ 1577(2007) բանաձևը՝ զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ, որից հետո Եվրախորհրդի անդամ շուրջ մեկ տասնյակ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը, նախաձեռնեցին համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ վիրավորանքի ու զրպարտության ապաքրեականացման ուղղությամբ:[31]

Նշված բանաձևով Վեհաժողովը հստակ մոտեցում որդեգրեց, այն է՝ զրպարտության համար ազատազրկումը պետք է անհապաղ չեղյալ հայտարարվի:

Վերոհիշյալի հաշվառմամբ՝ ստացվում է, որ առնվազն միջազգային իրավական չափանիշներին հակասող տրամաբանությունն է առաջ քաշվում ոչ միայն ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածով, այլ նաև ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1646 որոշմամբ:

---

[29] Հասանելի է https://www.facebook.com/FreedomHouseDC/posts/10158545165912078 հղումով:

[30] Հասանելի է https://www.osce.org/files/mcdec0003%20safety%20of%20journalists%20en.pdf հղումով, կետ 11:

[31] Այս մասին նշվում է ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշման մեջ:

Արդյունքում, նման կարգավորումները խախտում են մարդու՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքը՝ կարծիքի արտահայտման ազատությունը: Այս ամենը միանգամայն համահունչ չէ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և, իհարկե, ստեղծում է ազատ խոսքի ոչ իրավաչափ սահմանափակման վտանգավոր պրակտիկա:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Կարծիքի արտահայտման ազատությունն ապահովում է ժողովրդի կամքի ազատ ձևավորումն ու բաց հաղորդակցությունը հասարակության և պետության միջև: Ընդ որում, նշված իրավունքը պետք է իրացվի այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում: Ըստ որում, մարդկանց վիրավորելը և հայհոյելը չեն պաշտպանվում խոսքի ազատության երաշխիքներով:
- 2021 թվականին օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեական պատասխանատվություն է սահմանվել ծանր վիրավորանքի համար, այն պարագայում, երբ զրպարտությունն ու վիրավորանքը ՀՀ-ում ապաքրեականացվել էին դեռևս 2010 թվականին:
- «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն առաջին և երկրորդ ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանում՝ հրատապության կարգով, առանց մասնագիտական քննարկումների:
- Չնայած այս ամենին՝ 2022 թվականին Սահմանադրական դատարանը ծանր վիրավորանքի քրեականացումը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող:
- Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն լի է գնահատողական մոտեցումների տեղիք տվող ձևակերպումներով: Ընդ որում, խնդրահարույց է այն, որ իրավական անորոշության փաստը չի փարատվում նաև Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1646 որոշմամբ:
- Սահմանադրական դատարանը հայտնել է, որ ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելն ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում, և առկա չէ սահմանադրորեն հետապնդվող նպատակին հասնելու համար բավարար արդյունավետ այլ օրենսդրական միջոց: Մինչդեռ, Սահմանադրական դատարանը չի հիմնավորում իր եզրահանգման հիմքում ընկած հանգամանքները: Օրինակ՝ արդյո՞ք պետության կողմից ծանր վիրավորանքի կամ ատելության խոսքի բացառման, բազմակարծությունը խրախուսելու, հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր

օրենսդրական մակարդակում, կամ իրականացվել են իրազեկման աշխատանքներ հանրության շրջանում:

• Հայաստանում առկա է վիրավորանքի ապաքրեականացման և քրեականացման հարցի վերաբերյալ պետության քաղաքականության մոտեցումների հակասություն՝ հիմք ընդունելով նախ՝ 2010 թվականին վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացումը և երկրորդ՝ Սահմանադրական դատարանի նախկինում կայացրած որոշումը, որը վերաբերում է վիրավորանքի և զրպարտության միջոցով պատճառված վնասի հատուցման համաչափության խնդրին:

• Իրավական որոշակիության պահանջն առավել խիստ է քրեաիրավական նորմերի պարագայում, որոնց անկանխատեսելիությունը մարդու համար առավել ռիսկային է իրավական հետևանքների տեսանկյունից: Մինչդեռ, խնդրո առարկա քրեաիրավական նորմը լի է անորոշ իրավական հասկացություններով:

• Խնդրո առարկա կարգավորումները համահունչ չեն միջազգային իրավական չափանիշներին և Հայաստանի ստանձնած պարտավորություններին: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ ծանր վիրավորանքի քրեականացումից ի վեր այն քննադատության է ենթարկվել միջազգային մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող կառույցների կողմից:

• Սահմանադրական դատարանի կողմից նշված կարգավորումների օրինականացումը վտանգավոր նախադեպ է ստեղծում, քանի որ հանգեցնում է մարդկանց խոսքի ազատության անհամաչափ սահմանափակման:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*